ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԼԵԳԵՆԴ-ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԻԲՐԵԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ

Արարատ Յակոբեան

Հայոց միջնադարեան պետականաշուրջ ժամանակաշրջանի պատմութեան ընթացքում օտար նուաճողներից Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման ու պետականութեան վերականգնման ճանապարհին կարեւոր նշանակութիւն է ունեցել հայութեան քաղաքական կողմնորոշման (արեւելման) հարցը: Աւելին, կողմնորոշումների անհրաժեշտութիւնը զգացուել է անգամ հայոց հին ու միջնադարեան պետականութիւնների (թագաւորութիւնների) առկայութեան ժամանակ, երբ անվտանգութեան, ինքնապաշտպանութեան եւ տարածքային ամբողջականութեան ապահովման նպատակով յաճախ հայոց արքաները դիմել են միջպետական ու դաշնակցային կապերի հաստատման քայլերի՝ քաղաքականապէս կողմնորոշուելով դէպի մեկ կամ միւս երկրի հանդէպ:

Այդ առումով Հայաստանի ու ժողովրդի վիճակը շատ աւելի է բարդանում պետականութեան կորստի պայմաններում, երբ, սեփական համեստ ուժերին ու ռեսուրսներին ապաւինելուց զատ, հարկադրուած է եղել ապաւինել հեռու և մօտիկ, հիմնականում որեւէ զօրեղ քրիստոնեայ պետութեան կամ ուժի օգնութեանն ու աջակցութեանը: Եւ ահա հայ աշխարհիկ և հոգեւոր շրջանակները Հայաստանի ազատագրութեան նպատակին հասնելու ճանապարհին պատմականօրէն, միջնադարեան մտածելակերպին ընորոշ, կազմուել են հոգեմտաւոր խօսոյթներ, լեգենդ-գուշակութիւններ, հէքեաթի նմանուող քարոզչական պատումներ եւ այլն՝ փորձելով նաեւ նման միջոցներով հասնելու Հայրենիքի ազատագրութեան բաղձալի նպատակի իրագործմանը: Այստեղից էլ՝ Հայոց պատմութեան ընթացքում մեզանում մշտապէս ուղեկից է եղել քաղաքական կողմնորոշման հարցը, որը հետագայում ստանում է «Հայկական հարց» ձեւակերպմամբ նոր բովանդակութիւն՝ միտուած լինելով Արեւմտեան Հայաստանի կամ Թուրքահայաստանի միջազգային քաղաքական-դիւանագիտական ճանապարհով ազատագրութեան խնդրին (կնճռին):

Հայ ժողովուրդի քաղաքական կողմնորոշման հարցը

Յայտնի է, որ պատմականօրէն հայ ազգ-ժողովուրդը, թուաքանակով լինելով ոչ մեծաթիւ, այդ մասին դեռ մեկուկէս հազարամեակ առաջ մեզ է յիշեցնում քերթողահայր Մովսէս Խորենացին՝ փոքր ածու, թուով շատ սահմանափակ ու զօրութեամբ թոյլ լինելու մասին[1], բայցեւայնպէս Մեծ Հայքի Հայոց թագաւորական հարստութիւններում պատմաքաղաքական իրադարձութիւններն ու հանգամանքները այնպէս են դասաւորուել, որ անգամ հին և միջնադարեան Հայոց պետականութիւնների առկայութեան պայմաններում, կամայ թէ ակամայ նրանց օրակարգում դրուած են եղել քաղաքական կողմնորոշումների հարցը՝ աշխարհագրական ու տարածաշրջանային դրեթէ բոլոր ուղղութիւններով՝ սկզբնապէս հիմնականում դէպի Արեւմուտք, իսկ արդէն նոր դարաշրջանում աւե-

1 Տե՛ս Մովսէս Խորենացի, *Հայոց պատմութիւն*, Եր., 1961, էջ 82:

լի յաճախակի դէպի Հիւսիս՝ նկատի ունենալով Ռուսաստանը: Հասկանալի է, որ դեռ հին դարերից Հայաստանի տարածաշրջանի երկատուած վիճակը, նրանում օտար ցեղերով շրջապատմէջ բնակեցումը, իսկ դրան հակառակ՝ հայութեան՝ հայրենիքից յաճախ հարկադրական արտագաղթը, սեփական ինքնապաշտպանական ռեսուրսների պակասը, նաեւ ներքին բնոյթի՝ նախարարական տների եւ եկեղեցու միջեւ հակամարտ խնդիրների առկայութիւնը եւ այլն, մեծապէս դժուարացնում էին ազգային-ազատագրական պայքարի գործը, ուստի եւ, բնականաբար, մէջտեղ էր գալիս յուսալի դաշնակցի փնտրտուքի խնդիրը:

Տակաւին միջնադարում շատ առումներով քաղաքական կողմնորոշման զոհ կարելի է համարել Բագրատունեաց կենտրոնական թագաւորութեան անկումը: Յայտնի է, որ ԺԱ. դարում Հայոց պետականութեան անկման ու վերացման գլխաւոր սպառնալիքը դարձաւ Բիւզանդական կայսրութիւնը: Այստեղ՝ Հայոց թագաւորութիւնում, ներքին հակամարտութիւնը ընթացաւ՝ սպարապետ Վ. Պահլաւունու գլխաւորած սեփական ուժերին ապաւինելու կողմնակիցների, իսկ միւսը՝ Պետրոս Ա. Գետադարձ կաթողիկոսի և Վեստ Սարգիս իշխանի գլխաւորած՝ առանց կռուի, կամաւոր, այս անգամ, Արեւելեան Հռոմէական կայսրութեանը (Բիւզանդիային) միաւորուելու կողմնորոշումը: Յայտնի է նաեւ, որ վերջիններս խաբէութեամբ երիտասարդ Գագիկ Բ. արքային համոզեցին և ուղարկեցին Բիւզանդիա, որտեղից նրան «ծուղակն ընկած մի թռչունի պէս»[2] արգելուեց Հայրենիք վերադառնալ, իսկ իրենք աշխարհահռչակ մայրաքաղաք Անիի բանալիները, պարտադրուած կտակի համաձայն, յանձնեցին բիւզանդական կայսր Կոնստանդին Մոնոմախին (1042-1054 թթ.): Այդ ամենի հետեւանքով բիւզանդական զօրքերը մի քանի անգամ շրջափակման փորձերից ու դրոհներից յետոյ գրաւեցին մայրաքաղաք Անին, եւ 1045 թ. վերջ տրուեց Շիրակ-Անիի կենտրոնական թագաւորութեանը[3]:

Դարձեալ քաղաքական կողմնորոշման առումով՝ հերթական քաղաքական զոհը կարելի է համարել Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը: Այստեղ էլ, նրա պատմութեան վերջալոյսին կրօնադաւանական երանգով առաջ եկաւ պետութիւնը պառակտող քաղաքական կողմնորոշման խնդիրը՝ պետականութիւնը պահպանելու համար ապաւինել սեփական ուժերի՞ն, թէ՞ կաթոլիկութիւն ընդունելու գնով (պայմանով) կողմնորոշուել դէպի Հռոմը՝ պապական կաթոլիկների հետ միութիւն կազմելով: Այստեղից էլ՝ յայտնի է ԺԴ. դարի սկզբներից ծաւալուող, ունիթորական *եւ* հակաունիթորական *շարժումը (Հոսանքները): Ի վերջոյ, 1375 թ. յունուարին Եգիպտոսի սուլթանի եւ Հալէպի ամիրայի զօրքերը շրջապատում են Սիս մայրաքաղաքը եւ տեւական շրջապատումից ու յամառ մարտերից յետոյ ապրիլ 16-ին գրաւում այն: Կիլիկիայի Հայոց վերջին թագաւոր Լեւոն Զ.-ի գահազրկմամբ վերջ է տրւում միջնադարեան Հայաստանի վերջին թագաւորութեանը՝ Արեւմուտքից այդպէս էլ ոչ մի իրական օգնութիւն չստանալով: Կիլիկիայի տարածքը միացւում է Եգիպտոսի սուլթանութեանը, իսկ 1487 թ. նուաճւում օսմանեան Թուրքիայի կողմից[4]:*

Արդէն ուշ միջնադարից Հայոց անկախ պետականութիւնների անկումից ու

2 Արիստակէս Լաստիվերցի, *Պատմութիւն*, Եր., 1971, էջ 36:

3 Տե՛ս Մանանդեան Յակոբ, *Երկեր*, հտ. Գ, Եր., 1977, էջ 25-26, նաև՝ *Հայոց պատմութիւն*, հտ. 2, գիրք 2, Եր., 2014, էջ 160:

4 Յակոբեան Արարատ, *Հայոց պատմութիւն*, Եր., 2018, էջ 137:

վերացումից յետոյ Հայաստանի ազատութեան եւ անկախութեան վերականգնման ճանապարհին կրկին առաջին պլան է մղւում եւ օրակարգային հարց դառնում Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցը: *Աւելի ստոյգ, սկսած ԺԶ. դարից պետականակորոյս Հայաստանն ու հայ ժողովուրդը, ի սկզբանէ ի վիճակի չլինելով սեփական ուժերով ազատագրուել ու վերականգնել իր անկախութիւնը, նրա ազատատենչ աշխարհական ու հոգեւորական գործիչները սկսում են ուղիներ փնտրել՝ դիմելով հեռու եւ մօտիկ պետութիւնների, երկրների եւ ուժերի՝ ազատագրուելու ակնկալիքով: Սկզբնական շրջանում նրանց հայեացքը հիմնականում ուղղուած է եղել դէպի* Արեւմտեան Եւրոպա, *ընդհուպ՝ Հռոմի պապ:*

Յակոբ Անասեանի կարծիքով՝ Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման առումով, ինչպէս նախորդ դարերում, այնպէս եւ ԺԷ. դարում ունեցել է արեւմտեան կողմնորոշում[5]: *Նրա դիտարկմամբ՝ «ԺԷ. դարի արեւմտահայ շարժման ղեկավարները դրսի օգնութիւնը Արեւմուտքից էին սպասում եւ յաջողութեան յոյսեր կապում խաչակրաական շարժումների հետ»[6]:*

Մենք գիտենք, որ խորհրդահայ պատմագրութեան մէջ և ոչ միայն նրա, արդէն միջնադարից պետականազրկուած Հայաստանի ու հայ ժողովրդի՝ Եւրոպայի օգնութեամբ ազատագրութեան գաղափարը համարուել է լոկ որպէս մի պատրանք[7]: Դրան հակակշիռ, դէպքերի եւ պատմաքաղաքական իրադարձութիւնների հետագայ զարգացումներով պայմանաւորուած, ԺԸ. դարի սկզբներից աշխարհաքաղաքական դիրքի եւ արտաքին քաղաքական հեռանկարի առումներով Հայաստանի ազատագրման յոյսը տրամաբանօրէն աւելի ու աւելի մեծ չափերով սկսեց կապուել արդէն զօրեղացող եւ Կովկասեան տարածաշրջան ներթափանցող Ռուսաստանի օգնութեան հետ, ինչը պատմական օբյեկտիւ ընթացքով յանգեցրեց այդ գաղափարի ամրաց- մանը:

Պատմական լեգենդ-գուշակութիւնների ի յայտ գալը Հայաստանի ազատագրութեան հարցում

Հայոց հին և միջնադարեան պատմութեան դարաւոր հոլովոյթը ցոյց է տալիս, որ հայերի Արեւմտեան (լատինական) կողմնորոշումը հայ հասարակական-քաղաքական կեանքում իրօք ունեցել է պատմական խոր արմատներ: *Այն, ինչպէս ասուեց, ձեւաւորուել էր Կիլիկիայի հայկական պետութեան ժամանակներից, երբ «հայերը՝ ԺԱ.-ԺԳ. դարերում անմիջական ու երկարատեւ շփման մէջ էին գտնուել խաչակիր բանակների ու լատինադաւան ժողովուրդների հետ»[8]: Կը նշանակի՝ հայերի, ի մասնաւորի արեւմտահայութեան ու կիլիկիահայութեան, արեւմտաեւրոպական քաղաքական կողմնորոշումը աւելի առարկայական է դառնում տակաւին Կիլիկեան Հայաստանի եւ Խաչակրաց առաջին արշաւանքների ժամանակներից: Վերջիններիս գլխաւոր կարգախօսը դառնում է իբրեւ Քրիստոսի գերեզմանը եւ քրիստոնէական սրբավայրերը մահմեդական անհաւատներից ազատագրելը:*

ԺԱ. դարի կէսերին Բագրատունեաց Հայոց կեդրոնական թագաւորութեան անկումը, տարածաշրջանում ստեղծուած աշխարհաքաղաքական բարդ հանգամանքները՝ Արեւելքից սելջուկների աշխարհաւեր արշաւանքները, նուաճումներն ու հաստատուելը մահմեդականացած Մերձաւոր ու Միջին Արեւելքում, ի հակազդեցութիւն դրա՝ այդ նոյն դարի վերջից (1096 թ.)

5 Տե՛ս Անասեան Յակոբ, *XVII դարի ազատագրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում*, Եր., 1961, էջ 5-6:

6 Նոյն տեղում, էջ 50:

7 Տե՛ս Զուլալեան Մանուէլ, *Արեւմտեան Հայաստանը XVI-XVIII դդ.*, Եր., 1980, էջ 339 և ուրիշներ:

8 Անասեան Յակոբ, նշ. աշխ., էջ 50:

սկսուած Խաչակրաց բազում արշաւանքները, ներքին անհամերաշխութիւնն ու երկպառակութիւնները հայ հանրային մտքում ու գրականութեան մէջ խթանեցին միջնադարին բնորոշ տեսիլների, գուշակութիւնների, մարգարէութիւնների ու վարդապետութիւնների «փրկարար» մի երկար շարան: «Անշուշտ, ամեն ժողովուրդ էլ,- գրում է Հնչակեան գործիչ Ստ. Սապահ Գիլլեանը,- իր ձգտումները, իղձերը, երազները միշտ առասպելներով և հերոսների բերանով է արտայայտել, մանաւանդ հին օրերի մէջ»[9]: Եւ պատահական չէ, որ հէնց այդ դարաշրջանում էլ երևան եկաւ մի գրական ստեղծագործութիւն՝ «Դաշանց թուղթ» անուանումով լեգենդ[10]: Դրանում խօսւում էր հայ-հռոմէական հին բարեկամութեան մասին, որ իբրև «սիրոյ և միաբանութեան» այդ դաշինքը (պայմանագիր) կնքուել է Դ. դարի սկզբներին (316 թ.)՝ մի կողմից Հռոմի կայսեր Կոստանդինոս Ա. Մեծի ու Սբ. Սեղբեստրոս պապի (հայրապետի), իսկ միւս կողմից՝ Հայոց Արշակունի Տրդատ Գ. Մեծ թագաւորի ու Սբ. Գրիգոր Լուսաւորիչ պատրիարքի միջև: Ագաթանգեղոս պատմիչի պատկերմամբ՝ Կոստանդինոս Ա. Մեծ կայսրը Հայոց Տրդատ արքայի հետ, իբրեւ սիրելի եղբայր, դաշինք կնքեց՝ «Դաշինս կռէր ընդ նմա»[11]: Այդ նոյն դաշինքի մասին է ակնարկում նաև Փաւստոս Բուզանդ պատմիչը[12]: Ըստ «Դաշանց թղթի»՝ Հռոմի Սբ. Կոստանդիանոս Ա. Մեծ կայսրը իբր խօսել է հայոց գլխին ապագայում գալիք փորձութիւնների մասին եւ «մարգարէական» պատգամ է տուել, թէ ապագայի իր սերունդների ձեռքով է լինելու հայոց թագաւորութեան վերականգնումը. «Զի տառապանօք տառապի ազգն Հայոց մինչև ցելս հոգւոց իւրեանց, որոց փրկութիւն ի տեառնէ եղիցի և օգնութիւն յազգատոհմէ իմմէ»[13]: Յ. Անասեանը դա որակում է կիլիկեան շրջանում հայ լատինասէր (ունիթորական) հոսանքի կողմից հնարուած գրական կեղծիք: Պատմագիտական գնահատականի առումով ակադեմիկոս Ա. Յովհաննիսեանը «Դաշանց թուղթը» համարում է «հերիւրանք»[14]: Իսկ ԺԹ. դարի հրապարակախօս Գր. Արծրունին դաշանց թղթերով ու տեսիլք-պատումներով առաջնորդուող կղերական գործիչներին համարում էր «կտակարանական ազգ» և այլն[15]: Բայց նման գնահատականները չպէտք է համարել իբրեւ պատմական դատավճիռ, այլ, կարծում ենք, անցեալի երեւոյթները վեր հանելիս ու գնահատելիս դրանք պէտք է դիտել ու արժեւորել իր ժամանակի ու տարածութեան մէջ:

Այդ նոյն իմաստով, գոյութիւն ունի դարձեալ Դ. դարին վերագրուող մեկ ուրիշ՝ Հայոց հայրապետ Ներսէս Ա. Մեծ Պարթևի (353-373) «Տեսիլք»-ն այն մասին, իբրեւ թէ նա մահուան մահճում կանխագուշակել էր հայկական պետականութեան կործանումը, որ հայերը կը կորցնեն իրենց ազատութիւնը եւ կ'ենթարկուեն Արեւելքից եկած մի դաժան ու անողորմ ազգի լծին: Բայց վերջը Ա-

9 Սապահ-Գիլլեան, *Ինքնավար Հայաստան*, Գահիրէ, «Պէրպէրեան» տպ., 1915, էջ 10:

10 Վաւերագիր այդ նիւթն առաջին անգամ տպագրուել է 1683 թ. Վենետիկում հայերէն, կայ դրա նաեւ իտալերէն թարգմանութիւնը, ինչպէս նաեւ տասնեակների հասնող ընդօրինակութիւններ ու արտագրութիւններ: Այս մասին աւելի հանգամանօրէն տե՛ս Բարթիկեան Հրաչ, *Դաշանց թուղթ. կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը*.- «Պատմա-բանասիրական հանդէս», 2004, թիւ 2, էջ 65-116:

11 Ագաթանգեղոս, *Հայոց պատմութիւն*, Եր., 1983, էջ 487-488:

12 Փաւստոս Բուզանդ, *Հայոց պատմութիւն*, Եր., 1987, էջ 87, նաև՝ *Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա*, հտ. 2, Եր., 2011, էջ 71:

13 Անասեան Յ., նշ. աշխ., էջ 55:

14 Յովհաննիսեան Աշոտ, *Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան*, գիրք 1, Եր., 1957, էջ 74:

15 Գեւորգեան Լիդա, *«Մուրճ» ամսագիրը*, Եր., 1982, էջ 19:

բեւմուտքից պիտի դան քաջարի հռոմէացիք կամ ֆրանկները,[16] որոնց օգնութեամբ երկար տարիներ անց պիտի ազատագրուի հայ ազգը ու վերականգնուի հայկական անկախութիւնը[17]: Մեկ այլ մեկնաբանութեամբ՝ Սբ. Ներսէս Մեծի գուշակային կանխատեսմամբ՝ հայերի անմիաբանութեան պատճառով տեղի կ'ունենայ Հայաստանի քաղաքական քայքայում եւ իրար կը փոխյաջորդեն օտար տիրապետութիւնները՝ ներառեալ սելջուկ-Թուրքերի և մոնղոլ-Թաթարների ներխուժումները, մինչեւ որ, ի վերջոյ, կ'ազատագրուի Եւրոպայի (քրիստոնեայ մի հզօր Թագաւորի) կողմից ու կը վերականգնուի Հայոց Թագաւորութիւնը[18]: Ինքնին հասկանալի է, որ Դ. դարում ապրած Ներսէս Ա. կաթողիկոսը չէր կարող նման բան գրել՝ ակնարկելով սելջուկների և մոնղոլների մասին: Իսկ եթէ Ներսէս Մեծը գուշակային բնոյթի ինչ-որ բան գրել է, ապա ռազմաքաղաքական հանգամանքների բերումով դրանք ստեղծագործուել «ծաղկեցուել» ու յաւելուել են միջնադարում: Հայ պատմագրութեան երախտաւոր Լէոն (Առաքել Բաբախանեանը) (1860-1932 թթ.) Ներսէս Մեծի «Տեսիլք»-ը համարում է մի չինծու մարգարէութիւն՝ յօրինուած հոգեւորականութեան ձեռքով, թէ Արեւմուտքը գալու է զէնքով Հայաստանը ազատելու և Հայոց Թագաւորութիւնը վերականգնելու[19]: Մեկ այլ տեղ Լէոն՝ Ներսէս Մեծ Պարթեւին վերագրուած սոյն մարգարէութիւնը համարում է հայ կղերական դիւանագիտութեան ստեղծագործութիւն, իբրեւ թէ՝ Քրիստոնեայ Եւրոպայից է գալու Հայաստանի ազատութիւնը[20]: Լէոյի դիտարկմամբ՝ իր հերթին այդ կեղծ տեսիլքներն ու մարգարէութիւնները (գուշակութիւնները) Արեւմտեան Եւրոպայում Հռոմի պապի հետ միասին ոչ միայն չէին մերժուում կամ հերքուում, այլ, ընդհակառակը, պահպանում ու խրախուսում էին իրենց օգուտների համար[21]:

Ի յաւելումն վերը բերուածի՝ գոյութիւն ունի նաեւ Յովհաննէս Կոզեռն վարդապետի (ԺԱ. դար) «Կոզեռն» կոչուած[22] դարձեալ Ներսէս Ա. Պարթեւին վերագրուող տեսիլք-պատումի եւս մի վերախմբագրուած տարբերակ, որում կրկին խօսւում է եւրոպական երկրների՝ ֆրանկների, հռոմէացիների, տեւտոնների և այլ «խաչակիրների» կողմից ակնկալուող Հայաստանի ազատագրման հէքեաթի նմանուող մարգարէութեան մասին եւ այլն:

Հետեւութիւններ ու գնահատականներ

Վերը շարադրեալից կարելի է հետեւեցնել, որ տակաւին միջնադարում հայ հոգեւոր ու աշխարհիկ շրջանակներում խմորուած ու խօսոյթների ձեւով ի յայտ եկած, երբեմն հեքիաթ յիշեցնող այդ լեգենդ-գուշակութիւններն ու տեսիլք-պատումները մեզ հետաքրքրում են հայրենիքի ազատագրման քաղաքական մտքի ու գաղափարաբանութեան *առումով, որ թէկուզ անգամ երբեմն առասպելի նմանուող, բայց եւ այնպէս* հայ եկեղեցական ու աշխարհական այրերի միտքը միջնադարեան մղձաւանջի թանձրոյթում շարունակ մտորել ու գործել է, փորձ է արուել այս կամ այն կերպ ուղիներ գտնել՝ Հայոց հողը ազատագրելու եւ պետականութիւնը վերականգնելու համար: *Դժուար չէ նկատել,*

16 Յ. Անասեանի պարզաբանմամբ՝ «ֆրանկ» անուան տակ պետք է հասկանալ լատին, տեւտոն (գերման), մաջար (հունգար) և պլաւոն (լեհ) լեզուներով խօսող բոլոր ժողովուրդներին (տե՛ս Անասեան Յ., նշ. աշխ. էջ 214):

17 Տե՛ս Լէօ, *Հայոց հարցի վաւերագրերը*, Թիֆլիս, 1915, էջ 3, Յովհաննիսեան Ա., *Դրուագներ ...*, գ. 1, էջ 58-80, նաև՝ Անասեան Յ., նշ. աշխ., էջ 52:

18 Տե՛ս Յովհաննիսեան Ա., *Իսրայէլ Օրին և հայ ազատագրական գաղափարը*, Եր., 2016, էջ 43:

19 Տե՛ս Լեւ, *Խոջայական կապիտալ*, Եր., 1934, էջ 95:

20 Տե՛ս Լեւ, նշ. աշխ., էջ 11, 95 և 114:

21 Տե՛ս Լեւ, նշ. աշխ., էջ 96:

22 Տե՛ս Յովհաննիսեան Ա., *Դրուագներ...*, գիրք 1, էջ 45 և 197:

որ գրական-քարոզչական բնոյթի, ըստ ամենայնի, հնարուած նման ստեղծագործութիւններն ու խօսոյթները նպատակ են հետապնդել հայերի մէջ արմատաւորել Արեւմտեան (լատինասէր) քաղաքական կողմնորոշում, որ իբրեւ հայերի փրկութիւնը Եւրոպայից է գալու: Սրանք հայութեան քաղաքական մտայնութիւններն արտայայտող երկեր են, ինչը նշանակում էր, որ հայ ժողովուրդը իւր ազատագրութեան ճանապարհին պիտի որ հայեացքն ուղղէր դէպի Արեւմուտք:

Եւ պատահական չէր, որ հայոց ազատագրութեան գործին հետամուտ հիմնականում հոգեւորական և մասամբ աշխարհական հետագայ գործիչների՝ Ստեփանոս Սալմաստացու, Միքայէլ Սեբաստացու, Աբգար Թոխատեցու, Մահտեսի Մուրադ Բաղիշեցու, Յովհաննես Թութունջիի, Յակոբ Ջուղայեցու, Իսրայէլ Օրիի, Յովսէփ Էմինի և միւսների ընտրած ուղին (ճանապարհը) պիտի տանէր Արեւմուտք: Դէպի Արեւմուտք հայութեանը կողմնորոշող նման քաղաքական ուղղուածութեան հէքեաթանման ստեղծագործութիւններից զատ՝ հարկ է նշել, որ այդ կողմնորոշմանը տեղերում քարոզչական ու գործնական իրենց նպաստն էին բերում Վատիկանի (Հռոմի պապի) եւ Արեւմուտքի պետութիւնների միսիոներները: Պապական միսիոներների կողմից Հայոց աշխարհում կաթոլիկութեան եռանդուն քարոզչութեան հետ միասին տարւում էր նաեւ քաղաքական ագիտացիա, իբրեւ թէ՝ պապական եկեղեցու օգնութեամբ հայերին ազատագրելու մասին[23]*: Ակներեւ է, որ պապական միսիոներները եւ խաչակիր «եղբայրները» հայերի* կաթոլիկ դաւանափոխութիւնը *համարում էին* Հայաստանի ազատագրման հարցի լուծման նախապայման:

Այդպիսով՝ պետականակորոյս հայ ժողովրդի նախաձեռնող շրջանակները ուշ միջնադարում Հայաստանի ու հայ ժողովրդի արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում հանդէս են բերել երկու հիմնական մօտեցում. սկզբում՝ Հայաստանի ազատագրման յոյսը կապուել է Արեւմուտքի՝ Հռոմի պապ (Վատիկան), Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա և այլ երկրների հետ, իսկ հետագայում, դէպքերի և հանգամանքների (իրադարձութիւնների) բերումով, նոյնիսկ պատահականութեան գործօնով պայմանաւորուած, արդէն ԺԸ. դարի սկզբներից, յանձին՝ հայ ազատագրական շարժման նշանաւոր գործիչ Իսրայէլ Օրու, որոշակի քաղաքական դիմադարձ է կատարւում աշխարհագրօրէն Հայաստանին աւելի մօտ եւ փոխադարձ շահերով կարծես աւելի համընկնող դէպի Մոսկովեան պետութիւնը՝ Ռուսաստանը: Եւ այս դաղափարը հետագայում հայ հանրութեան հասարակական-քաղաքական շրջանակներում գնալով դառնում է առաւել տիրապետող (գերիշխող) մտայնութիւն ու քաղաքական գործելակերպ: Ճանաչուած պատմաբան, պրոֆ. Վ. Դիլոյեանի բնորոշմամբ՝ հայ ազգային-ազատագրական շարժման հիմնական արտաքին-քաղաքական յենակէտը դառնում է Ռուսաստանը, եւ այդ շարժումը սկսում է կրել «դէպի Ռուսաստան քաղաքական կողմնորոշման բնոյթ»[24]*: Ընդհանուր առմամբ, հետեւութիւն կարելի է անել այն իմաստով, որ «Դաշանց թղթերի» և «տեսիլք-դուշակութիւնների» գլխաւոր դաղափարն այն էր, որ, այնուամենայնիւ, Հայաստանի ու հայ ժողովրդի փրկութիւնը պիտի դար դրսից, ինչը կարելի է համարել հեռուն չտանող և, ի վերջոյ, յուսախաբութեան յանգեցնող ուղի:*

---

23 Տե՛ս Զուլալեան Մ., *Արեւմտեան Հայաստանը XVI-XVIII դդ.*, էջ 339:

24 Դիլոյեան Վալտեր, *Արեւելեան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամեակին և հայ-ռուսական յարաբերութիւնները*, Եր., 1989, էջ 3:

Մինչդեռ պատմական փորձն ու իրականութիւնը ցոյց է տալիս, որ իր ազատութիւնն ու անկախութիւնը կորցրած ցանկացած ազգի հայրենիքի ազատագրութեան ամենայուսալի եւ անառարկելի երաշխիքը առաջին հերթին ու վերջին հաշուով կարող է լինել սեփական ուժերին ու կարողականութիւններին ապաւինելը: *Այս կապակցութեամբ տեղին է մէջբերել մեր ժամանակների գաղափարախօս ու փիլիսոփայ Գ. Նժդեհի քաղաքական բանաձեւի նմանուող անկոտրում միտքն այն մասին, որ «Ինքն իրեն յարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանութեան յոյսը դնում է նախ ի՛ր բազուկի, ի՛ր զէնքի վրայ»[25]: Իսկ այդ նպատակին հասնելու ճանապարհին, ի լրումն վերը ասուածի, ականաւոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը իրաւացիօրէն ակնարկում էր, որ զէնքի դիմելու համար շատ կարեւոր է ազգի կռուի համար հոգեբանօրէն պատրաստ լինելը՝ «Հոգեկան մղումը, որ տանում է դէպի զէնք»[26]: Բայց պէտք է արձանագրել, որ պատմականօրէն այս հոսանքին ապաւինող հայ հանրութեան տեսակարար կշիռն այն ժամանակներում, ցաւօք, եղել է փոքր: Եւ դժուար է ասել, թէ ներկայումս ինչպիսին է պատկերը մեզանում: Սոյն քննարկուելիք հարցերը արդիական են հնչում եւ թող զարմանալի չթուայ, որ ներկայումս էլ հայ ժողովրդի առջեւ կրկին կանգնած է՝ մի կողմից հայրենիքի անվտանգութեանն ու պաշտպանութեանը ազգովին պատրաստ լինելու, իսկ միւս կողմից՝ նաեւ քաղաքական կողմնորոշման նախընտրութեան հարցը՝ իբրեւ օժանդակող գործօն:*

25 **Գարեգին Նժդեհ**, *Հատընտիր*, Եր., 2006, էջ 39:

26 **Ադոնց Ն.**, *Երկեր*, հտ. Ա, Եր., 2006, էջ 13: